

սուժոյ, որուն կ'ականարկէ արձանագրութիւնը և որ կեդրոնը զետեղուած է, ամենէն կարեւորն է: Ս. Հոգւոյն աղաւնին քրիստոնէական երկրորդ նշանակն է հոն: Վեր բարձրացող առիւծ մը և արեւը՝ Պարսկաստանի զինանշանը կ'ոգնեն: Վերջապէս, մեղուներու պարս մը որ կը թռչի դէպի ինչ որ փեթակ մը պէտք է ըլլայ, ըստ ամենայն հաւանականութեան՝ աշխատանքի եւ գործունէութեան այլաբանութիւն մը կը ներկայացնէ:

Յարգելի յօդուածագիրը կ'աւելցնէ թէ անհնար եղած է ամբողջապէս քակել արձանագրութիւնը: Երեսակողմը, «ես եւ ծառայ Յիսուսի Քրիստոսի» բանաձեւէն զատ, ան կը կարդայ «Ձուդացի» բառը, ինչպէս և Գրիգոր . . . հեց Գերաֆի» անունը: Հօրենական անուն մը որուն միայն վերջաւորութիւնը հեց կը տեսնուի, գրուած է «Գրիգոր» ծննդեան անունին, «Գերաֆի» ծագման տեղւոյն անունին միջեւ: Այդ անունը կը սերի այժմեան Քերեֆէն, որ Պաղեստինի մէջ գիւղ մ'է, Յորդանանի ձախ եզերքին վրայ: Հոն կար առննով հայկական հին գաղութ մը 1330ին, երբ Կիլիկիոյ Լևոն Դ. թագաւորը Քարաք գիւղի եկեղեցւոյն կը նուիրէր Յայսմաւուրք մը՝ իր ինքնագիր յիշատակարանով:

Յետակողմին վրայ կ'երեւայ «Յիսուս Քրիստոս Գառն Ասուժոյ որ շնորհեց . . . ամենայն երկրի» պարբերութենէն յետոյ, հայկական տոմարի 1122 տարեթիւը, որ կը համապատասխանէ Քրիստոսի թուականին 1672-73 տարւոյն:

Ներկայացուած անձնաւորութեան հագուածքը ԺԷ. դարու պարսկական զգեստաւորման կը մօտենայ, ինչպէս կը տեսնենք, օրինակի համար, Ժ. Պ. Թավէրնիէի պարսիկ զգեստով կենդանագիրը (1712):

Յօդուածագիրը յետոյ մէջ կը բերէ Յ. Տէր Յովհաննանցի մեր վերեւ յիշատակած Գերաք Աղայի եւ անոր որդւոյն մասին գրածը ու անոր տապանագիրէն կ'եզրակացնէ թէ Գերաք Աղա ծագմամբ Քէրէկ քաղաքէն ըլլալով հաստատուած է ի Նոր Զուղա ու վաճառականութեամբ զբաղելով Վենետիկ դացած ու չինել տուած է վերոյիշեալ մետաղները:

Հ. Դ. Ալիշանի Հայ-Վեհեհ գիրքին մէջ (էջ 501 եւ 503) կը յիշատակուին ¹⁰ Գերաֆ-Միրման ընտանիքը, ծագմամբ Զուղայեցի և ԺԷ. դարէն սկսեալ Իտալիա հաստատուած: Այս գերդաստանին իտալացած սերունդները մինչեւ հիմակ կը գտնուին Լիվոր-